ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«19» 01 2026թ.
No 000442

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՍԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Առնո Բաբաջանյան 32շ., բն. 16,
էլ. փոստի հասցե՝ arsensargsyan@armeniapress.net)

Հարգելի՛ պարոն Սարգսյան,

Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կողմից 2026 թվականի հունվարի 7-ին Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողով (այսուհետ՝ **Հանձնաժողով**) վերահասցեագրված Ձեր 2025 թվականի դեկտեմբերի 29-ի գրության կապակցությամբ տեղեկացնում ենք, որ «Տնտեսական մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 3-րդ հոդվածի 1-ին մասի 11.1-րդ կետի համաձայն՝ սպառողների շահերի պաշտպանությունը Հանձնաժողովի կողմից իրականացվող միջոցառումների ամբողջություն է՝ կանխելու, խափանելու կամ վերացնելու այնպիսի վարքագիծը, գործողությունը կամ անգործությունը, ներառյալ՝ դրանց հետևանքները, որոնք վնասում են կամ կարող են վնասել անորոշ շրջանակով սպառողների կամ սպառողների խմբի շահերը:

Օրենքի 26.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սպառողների շահերը խախտող գործելակերպ են համարվում տնտեսավարող սուբյեկտի ցանկացած վարքագիծ, գործողություն կամ անգործություն, որոնք ազդում են կամ կարող են ազդել ***անորոշ շրջանակով սպառողների կամ սպառողների խմբի շահերի վրա*** և հակասում են սույն օրենքին, այլ օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի կամ գործարար շրջանառության սովորույթներին կամ խախտում են սպառողների նկատմամբ

բարեխղճության, ազնվության, արդարության, ճշմարտության կամ անաչառության սկզբունքները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ տվյալ դեպքում Գրությամբ բարձրացված հարցը մասնավոր վեճ է և չի կարող քննարկման առարկա դառնալ Օրենքի իմաստով սպառողների շահերը խախտող գործելակերպի հատկանիշների շրջանակում:

Միաժամանակ, հարկ ենք համարում նշել, որ բարձր ենք գնահատում Ձեր ներգրավվածությունը սպառողների շահերը խախտող գործելակերպի բացահայտման գործում և տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված մասնավոր վեճին կարող է ընթացք տրվել՝ այն ներկայացնելով Հանձնաժողովի կողմից ներդրված **«Սպառողի օգնականը»** թվային հարթակի միջոցով, որը հասանելի է https://competition.am/hy/գործունեություն/սպառողի-օգնական հղմամբ, որը հնարավորություն կտա.

- ներկայացնել առցանց բողոք ապրանքի կամ ծառայության հետ կապված խնդիրների վերաբերյալ անմիջապես տնտեսավարող սուբյեկտին,
- ստանալ ծանուցումներ բողոքի կարգավիճակի և ընթացքի մասին,
- ստանալ պատասխաններ էլեկտրոնային փոստի միջոցով,
- օգտվել Հանձնաժողովի աջակցությամբ մշակված պարզ և հասանելի բողոքարկման հարթակից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Սպառողների շահերի պաշտպանության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

www.competition.am կայքում հրապարակման օրը՝ 4 փետրվարի 2026 թվական: